3087
հայերեն

2004

Շատ հարկաւոր

# ՀԱՐՑՄՈՒՆՔ-
# ՆԵՐ

[illegible]
[illegible]
[illegible]
[illegible]
[illegible]

[illegible]

ի 18 $\frac{7}{3}$ 35

[illegible]

Շատ

Հարկաւոր

# ՀԱՐՑՄՈՒՆՔ ՆԵՐ

ամէն մարդոյ համար։

Թարգմանութեան։

Ի հայրապետութեան Տ՟ն ՅՈՎ-
ՀԱՆՆՈՒ կարբեցւոյ սըր-
բազնասուրբ կաթուղիկոսի
ամենայն հայոց։

Հրամանաւ Տեառն ԲԱՂԴԱ-
ՍԱՐԱՅ սրբազան արքեպիս-
կոպոսի և մետրապոլտի
Հայոց համայն Աղուանից։

Ի ՇՈՒՇԻ։

Յամի Տեառն 1832։

3087 ա5/ 485 1160-ՀՀ
9988-57-1-685

28

## Շատ հարկաւոր հարցմունք-ներ՝ ամէն մարդոյ համար։

Ա. Ինչի միտք բերելես, թէ քո հոգիդ անմահ է, և անչափ ազնիւ և պատուական է քան թէ մարմինդ։

---

Ապա հողն կըդառնայ դէպի եր-կիրն՝ ինչպէս (որ առաջ) էր. և հո-գին կըդառնայ Աստուծոյ մօտ՝ որ տուաւ նորան։ Ժողով. ԺԲ. 7։

Մի՛ վախենաք նորանցից որ մար-մինըն սպանումեն և հոգին չեն կարող սպանել, բայց աւելի վախեցէք նորա-նից՝ որ կարող է հոգին և մարմինըն կորցնել գեհենի մէջն։ Մատ. Ժ. 28։

Բ․ Իսկի մին ժամանակ ճշմարտութեանով միտք ածել եւ թէ մարդոյ հոգին մեղքով ապականուած եւ պղծուած է եւ նրա համար յաւիտենական մահի տակն ընկած է։

---

Անօրէնութեանով յղացայ՝ եւ մեղքով ծնաւ զինձ իմ մայրս։ Սաղմ․ ծ․ 7։

Մարմնուց (Մեղաւոր մարմնոյ) ծընուածն՝ մարմին (Մեղաւոր) է։ Յօհան․ գ․ 6։

Իսկի արդար չը՛կայ, իսկի մինն էլ չէ։ Հռօմ․ գ․ 10։

Իրաւի որ բարկութեան որդիք էինք (մենք էլ) ինչպէս ուրիշներն։ Եփես․ բ․ 3։

Մեղքի պաշարն մահ է։ Հռօմ․ զ․ 23։

---

Գ․ Միտք արի՞ր թէ Աստուածաշունչ գիրքն լիքն է զօրաւոր եւ զգուշացնող յորդորմունքով՝ որ Աստուած

զարթնացնում է մեզ նորանցով. որ մեր հոգու փրկութիւնըն ամէն բաներից գլխաւոր գործ համարինք։

---

Այս օր եթէ նորա ձայնըն լսէք, մի՛ պնդացնէք ձեր սրտերըն՝ ինչպէս որ էն բարկացնելոյ ժամանակումն, փորձութեան օրումն, անապատի (չէօլէ) միջումն։ Եբրայ. Գ. 7. 8։

Դուք էլ պատրաստ կացէք. ինչու որ՝ էն ժամն (սահաթն) որ դուք չէք սպասիլ, որդին մարդոյ կըգայ։ Մատթ. ԻԴ. 44։

Ի՞նչ օգուտ է մարդոյ՝ որ ամէն աշխարհքըս ստանայ և իրան անձին վնաս տայ՝ կամ թէ ի՞նչ գին կըտայ մարդ իրան անձըն փրկելոյ համար։ Մատթ. ԺԶ. 26։

---

Դ. Իսկի մին ժամանակ ահով բռնվեցի՞ր և շարժվեցար էս ահաւոր

և շատ վախենալի մտածմունքովս՝ Թէ լինի որ մին յանկարծ և անյուսալի ժամանակում մահով կանչվիս էս աշխարհքիցս էն դալու աշխարհքըն, և խնկի մին բոպէ էլ թող չի տան քեզ որ մին բան մտածես կամ աղօթք անես, կամ մին քիչ պատրաստես քո անձըդ յաւիտենական կեանքի համար։

---

Մի՛ պարծենար էգուցվան օրովն. ինչու որ չես գիտում՝ թէ էգուցվան օրն ինչ պիտի ծնի քեզ համար։ Առակ. իէ. 1։

Մին հարուստ մարդոյ արտերն առատ պտուղ տուեր։ Նա իրան միտքումն մտածումէր և ասում. ի՞նչ անեմ. որ տեղ չըկայ որ իմ պտուղներըս էնտեղ ժողովեմ։ Նա ասաց՝ գիտումեմ ինչ կանեմ. իմ համբարներըս կըքանդեմ, և էլ աւելի մեծ կըշի-

նեմ, և իմ ցորենըս և ամէն բարիքնե-
րըս կըժողվեմ էնտեղ։ Ու իմ ան-
ձիս կասեմ։ ով անձն՝ շատ բարիքներ
ունիս՝ շատ տարիներու համար ամ-
բարված. ապա հանգիստ առ, կե՛ր,
խմէ՛ր և ուրախ լեր։ Աստուած նո-
րան ասաց. անմիտ. էս գիշերուան քու
հոգիդ քեզմէն յետ կըխնդրեն. ապա
էն որ պատրաստեցիր՝ ում կըլինի։
Այնպէս էլ նա՝ որ իրան անձին հա-
մար գանձ (խազնայ) հաւաքէ, և Աս-
տուծով չըհարուստանայ։ Ղուկ. ԺԲ
16—21։

---

Ա. Դու քո մեղքերովդ Աստուա-
ծային օրէնքըն քանդել ես՝ և մեծ Աս-
տուծոյն բարկացրել. ուրեմն մի թէ
հիմիկ զըրթնացել ես՝ որ տեսնես քո
մեղանչական և վնասակար գործքերըդ՝
որ քո հոգիդ կորցնում են. և մի թէ
խոնարհութենով խոստովանում ես քո

հոգւոյ կորուստըն, և զղջմանումս քո մեղաւոր ճանապարհիցն։

---

Աստուած հիմիկ մարդկանց էս է պատուիրում. որ ամէն մէկն ապաշխարեն։ Գործ. ժէ. 30։

Թէ որ չապաշխարէք, ամէնքդ էլ էնպէս կըկորչիք։ Ղուկ. ժգ. 5։

Աստուած նորան (Յիսուսին Քրիստոսին) առաջնորդ և փրկիչ բարձրացրուց իրան աջ ձեռովն. որ Իսրայելին ապաշխարութիւն տայ՝ և մեղաց թողութիւն։ Գործ. ե. 31։

Աստուծոյ հրեշտակներին առաջին ուրախութիւն կըլլինի մին մեղաւորի համար որ կապաշխարէ։ Ղուկ. ժե. 10։

Էն տրտմութիւն որ աստուծով է՝ ապաշխարութիւն է գործում փրկութեան համար առանց զղջմանալոյ։ Բ. Կորն. է. 10։

Այսուհետև ապաշխարումն արժանի պտուղ արէք։ Մատթ. Գ. Ը։

---

Օ. Եթէ քո սրտի մէջ են յոյսըն դնես՝ որ լինի թէ յետին ժամանակումն ապաշխարես, և եթէ օրէ ցօր խոստանաս՝ թէ յետոյ կը շիտակեմ իմ վարքըս, ապա մի թէ չե՞ս խաբում քո անձըդ՝ ահաւոր խաբէութենով, որովհետև կարելի է որ հիւանդութեան ժամանակն, և մեռնելոյ սահաթն յանկարծ բռնէ քեզ։ Այսպէսի ժամանակները՝ իսկի պատշաճ ժամանակ չեն էդ մտածմունքներիդ և ծանր ծանր բաներիդ համար. և թէ որ հենց կամքով ուշայնես քո ապաշխարութիւնըդ՝ ապա լինի որ ոչ ժամանակ և ոչ ողորմութիւն տվլի քեզ՝ որ ապաշխարես. ինչու որ՝ ապաշխարելն և ողորմութիւն գտնելն քո ձեռքումդ չէ. բայց Աստու-

ծոյ շնորհքովն է տըվվում մար-դըն

---

Եւ երբ որ նա (պօղոս) խօսումէր արդարութեան՝ համար՝ և պարկեշտութեան՝ և էն նոր գալու դատաստանի համար. փելիքս շատ ահով բռնվեցաւ, և պատասխան տուաւ՝ թէ դու հիմիկս գնա և երբ որ ժամանակ կըլլինի, կըկանչեմքեզ։ Գործ. Իդ. 25։

---

(Ծանօթութեան)

Մ'ենք պէտք չէ մեր վերջաւորութեան սպասենք՝ թէ էլ ետքէն պատշաճ ժամանակ ելանորան՝ Աստուծոյ բանըն լսելոյ և ապաշխարութենով Աստուծոյ շնորհքըն գտնելոյ համար։

---

Ահա հիմիկ է ընդունել ի ժամանակն, հիմի՛կ է փրկութեան օրն։ Բ. Կորն. Զ. 2։

Մ՚ի պարծենար էգուցյան օրուն․ ինչու որ չես գիտում թէ էգուցյան օրն ինչ պիտի ծնի քեզ համար։ Առակ․ ԻԷ․ 1։

---

Ա՛․ Գիտո՞ւմես՝ որ քո սիրտդ խաբեբայ է՝ և անհնարին չար։ Երեմ․ ԺԷ․ 9։ Եւ որ սրա համար շատ հեշտ մոլորվումես և չես կարող քո յատուկ միտքըդ, բնութըդ, վարքըդ և պարտաւորութիւնըդ ճշմարտապէս և շիտակ իմանալ ինչպէս որ պէտք է քո հոգոյ փրկութեան համար։ Ապա եթէ էսպէս է՝ մի թէ պէտք չէ՞ քեզ՝ որ քո սիրտըդ և միտքըդ և վարքըդ փորձես և քննես Աստուծոյ առաջին։ Մ՚ի թէ պէտք չէ՞ քեզ որ աղօթք անես դաւթի պէս՝ որ ասումէ։

---

Աստուած փորձիր ինձ․ և ճանաչիր իմ սիրտըս․ քննիր ինձ և ճանա-

չի՛ր իմ գնալըս. և տես թէ անօրէնութիւնք լինին իմ ճանապարհներումս. ապա առաջնորդիր ինձ քո յաւիտենական ճանապարհներովն։ Սաղմ. ՃԼԹ. 23։

Ը. Մի՛ թէ մտածեցի՞ր Աստուծոյ օրէնքըն՝ թէ նա սուրբ է, արդար, և բարի։ Մի՛ թէ քո անձըդ քննեցի՞ր և փորձեցի՞ր նորանով. գիտումե՞ս որ նա հոգևոր է՝ և հէնց սրա համար էլ քո խորհուրդներըդ և մտածմունքներըդ դատումէ, ինչպէս որ քո խօսքերըդ և գործքերըդ. էլ գիտումե՞ս՝ որ եթէ հէնց մի՛ բանով էլ մի՛ պատուիրանքի դէմ մեղանչես, դատապարտուած ես։

---

Լսելէք որ առաջին մարդկանցն ասվեցաւ՝ թէ մի՛ սպանիր. ինչու որ ով որ կըսպանէ՝ պարտական կըլինի դատաստանին։ Բայց ես ասումեմ ձեզ

Թէ ով որ զուր տեղն կըբարկանայ ի-
րան եղբօր վերայ, պարտական կըլլի-
նի դատաստանին. և ով որ իրան եղ-
բօրն կասէ՝ յիմար. պարտական կըլլի-
նի մեծ դատաստանին. և նա որ իրան
եղբօրն կասէ՝ մորոս. (անխելք՝) պար-
տական կըլլինի գեհեննի կրակին։
Լսել էք որ ասվեցաւ՝ թէ շնութի
չանես. բայց ես ասում եմ ձեզ՝ թէ
ամէն ով որ մին կնկան վերայ մտիկ
տայ՝ նորան ցանկանալու համար՝ նա
իսկոյն շնացաւ նորա հետ իրան սրտի
մէջն։ Մատթ. Ե. 21. 22. 27. 28։

Եւ ես առանց օրէնքին մին ժամա-
նակ կենդանի էի. բայց երբ որ պատ-
ուիրանքն հասաւ ինձ՝ մեղքն կենդա-
նի էլաւ, և ես մեռայ՝ և հենց էն
պատուիրանքն որ կենաց համար էր
(տրվված՝) նա ինձ համար մահի պատ-
ճառ էլաւ։ Գիտումենք որ օրէնքն
հոգևոր է. բայց ես մարմնաւոր եմ՝

մեղքին ներքև ծախված։ Հռօմ. Է. 9.
10. 14։

Ով որ ամէն օրէնքըն պահէ, և մը-
նումն մեղանչէ, ամէն օրէնքին էլաւ
պարտական։ Յակ. Բ. 10։

---

Թ. Մ՛ի թէ ճանաչեցի՞ր թէ քո
ամէն գործքերի արդարութիւնն մին
կեղտոտ և պատառուած հին շորի
նման է՝ և ինքն իրանից իսկի կարող
չէ քեզ արդարացնել՝ մինչև որ իս-
պառ պէտք է ուրանալ էնպէսի ար-
դարութիւնըն և դէն քցել՝ ինչպէս
մին անօգուտ և անպիտան բան։

---

Մ՛ին քանի մարդկանց էլ՝ որ ի-
րանց մտքերումն պարծենումէին՝ ի-
բըր թէ արդար են՝ և ուրիշներին
ոչինչ էին համարում՝ էս առակըս ա-
սաց։ Երկու մարդ վեր էլան տա-
ճարն որ աղօթք անեն. մինն փարի-

սեցի և մէկէլն մաքսաւոր (կիւ-մրիւք-չի։) փարիսեցին ջոկ կանգնած էր և առանձին էս աղօթքըս էր անում. (իմ) Աստուած գոհանում եմ քեզանից՝ որ ես ուրիշ մարդկանց պէս չեմ՝ յափշտակողներին, և անիրաւներին, և շնացողներին. կամ թէ էս մաքսաւորին պէս։ Նոյց շաբաթումն երկու անգամ պաս եմ պահում, և իմ ամէն ապրանքներիցս տասանորդ եմ տալիս։

Իսկ մաքսաւորն հեռու կանգնած էր՝ և իրան աչքերն էլ չէր կամենում դէպի երկինքն բարձրացնել. բայց իրան կուրծքըն (դօշը) թակում էր և ասում. Աստուած քաւիր ինձ մեղաւորիս։ Ասում եմ ձեզ՝ թէ սա արդարացած գնաց իրան տունն. քան թէ նա. ինչու որ ամէն ով որ իրան անձըն բարձրացնում է՝ կը խոնարհվի, և ով որ իրան անձըն խոնարհացնում է՝ կը բարձրանայ։ Ղուկ. ԺԸ. 9—14։

Եւ (մենք) ամէնքս պղծի նման է-
ղանք. մեր արդարութիւնն (էլ) պիղծ
շորերի նման. և մենք ամենքս տերևի
նման վեր թափվեցանք. մեր անօրէ-
նութիւնների պատճառովն քամիներն
ցրուեցին մ[illegible]։ Եսայ. կդ. 6։

Ո՛չ թէ արդարութեան գործքե-
րին համար՝ որ մենք արինք, այլ ի-
րան ողորմութեան համար՝ ապրեց-
րուց մեզ նոր ծնվելույ աւազանովն և
սուրբ հոգույ նորոգութենովն։ Տիտ.
գ. 5։

---

Ժ. Թէ որ հիմիկ միտքումդ
յայտնի իմացար քո հոգույ խեղճու-
թիւնըն, և սրտումդ շարժվեցար
դէպի զղջմանըն էս ծանր ծանր
ուսմունքներովս. ապա գիտումե՞ս թէ
ոչ թէ դու՝ բայց մէնակ սուրբ
հոգին կարող է մին ճշմարիտ փոփո-
խութիւն գործել քո սրտիդ մէջն. և

թէ չեն կարող Աստուծոյ արքայութիւնըն տեսնել եթէ ոչ նոր ծնվել ի սուրբ Հոգուցն:

---

Յ̃ն պատասխան տուաւ և ասաց. Ճշմարիտըն ասեմ քեզ. թէ որ մինն ջրից և Հոգուց չըծնվի՝ նա կարող չէ Աստուծոյ արքայութիւնն մտնել: Յօհան. Գ. 5:

Բայց մենք ոչ թէ էս աշխարհքիս հոգին ունինք, այլ էն հոգին՝ որ Աստուածանից է. որ ճանաչենք էն շնորհքըն որ Աստուածանից տրվվաւ մեզ: Պատճառն որ՝ մարմնաւոր մարդն Աստուծոյ հոգոյ բաներըն չի ընդունում. ինչու որ յիմարութիւն է նորա առաջին. և էլ չի կարող գիտել՝ որ հոգևոր կերպով պէտք է քննվի: Ա. Կորն. Բ. 12—14:

---

ԺԱ. Թէ որ սիրտդ շարժվել է զղջութենով, և թէ որ աղաղակու-

9988-57

մես՝ ի՞նչ պէտք է անեմ ես որ ապ-
րիմ. ապա մտածե՞լ ես Աստուծոյ սէ-
րը՞ն, որ իւրան որդին տուաւ որ աշ-
խարհքի մեղաց համար մեռնի։ Մի՞
թէ հաւատումե՞ս թէ Յիսուս
Աստուած է ամենին վերայ օրհ-
նեալ յաւիտեանս. բայց մարմին եղաւ
որ քեզ համար մեղք լինի. նա որ
բնաւ մեղք չըճանաչեց. և մի թէ կա
մենումես ականջ դնել մի՞ աղքատ
կորած մեղաւոր՝ երբ որ Քրիստո-
սի պաշտօնեաներին կանչէն քեզ
Քրիստոսի տեղակ՝ որ հաշտվիս
Աստուծոյ հետ։ Մի՞ թէ կամե-
նումե՞ս նորա մօտն գալ՝ և նորան
ընդունել։ Մի՞ թէ կամենումե՞ս
համարձակվել՝ որ քո աղքատ և
ապականված հոգիդ յանձնես նորա
ձեռն՝ որ փրկէ և սրբէ ամէն
մեղքից նորա արիւնովը՝ և ապա ար-
դարանայ Ա՟յ առաջին։

Սա (յօհաննէսն) վկայութեան համար եկաւ՝ որ լուսոյ համար վկայէ՝ որ ամէնքն նորանով հաւատան։ Եւ բանն մարմին եղաւ՝ և մեր միջումն բնակվեցաւ. և նորա փառքըն տեսինք ինչպէս հօրիցն եղած միածնին որդույ փառքըն շնորհքով և ճշմարտութենով լիքն։ Յօհան. ա. 7. 14։

Ով որ հաւատումէ նորան՝ չի դատապարտվիլ. և ով որ չի հաւատում նորան՝ հենց հիմի դատապարտված է. ինչու որ՝ չըհաւատաց Աստուծոյ միածնին որդույ անունին։ Յօհան. գ. 18։

Պատճառն որ ամէնքն մեղանչեցին և Աստուծոյ փառքիցն պակասեցան։ Եւ ձրի (հօ-քեայ) արդարանումեն նորա շնորհքովըն՝ էն փրկութեան ձեռովն որ Յիսուս Քրիստոսումն եղաւ։ Որ Աստուած նորան առաջ դրաւ քաւութիւն լինելոյ համար նո-

րա արիւնովն՝ հաւատքի. ձեռովն. որ իրան արդարութիւնըն ցոյց տայ էն առաջուց գործված մեղքերի թողութեան համար։ Հռօմ. Գ. 23—25։

Որեմն Քրիստոսի կողմանէն պատգամաւոր (էլչի) ենք. ինչպէս որ Աստուած էլ յորդորում մեզանով։ Աղաչումենք Քրիստոսի կողմանէն. հաշտուեցէք Աստուծոյ հետ։ Պատճառն որ՝ ինքն նորան որ մեղք չէր գիտում՝ մեզ համար մեղք արաւ որ մենք նորանով Աստուծոյ արդարութիւն լինինք։ Բ. Կորնթ. Ե. 20. 21։

Ինձ մօտ եկէք՝ ամէն վաստակվածներ և բեռնաւորներ, և ես հանգիստ կըտամ ձեզ։ Մատթ. ԺԱ 28։

---

ԺԲ. Մի թէ մտածեցի՞ր թէ, կարօղ չես պրծնիլ՝ թէ որ հոգս չանես էսպէսի մեծ փրկութեան հա-

մար. և թէ որ չես արդարացել Յիսուսի Քրիստոսի արիւնովն. որ օրէնքի վախճանն է՝ էն ամէնին արդարացնելոյ համար որ հաւատումէ նորան, կըմեռնիս քո մեղաց մէջն։ Մանաւանդ՝ մի թէ գիտումես որ ամէնիցն մեծ մեղք է ոչինչ համարիլ Քրիստոսի արիւնըն և էն հաշտութիւնըն որ նա տալու։

---

Բայց ասացի ձեզ՝ թէ ձեր մեղաց մէջն կըմեռնիք. ինչու որ՝ եթէ չըհաւատաք, թէ (էն) ես եմ. ձեր մեղաց մէջն կըմեռնիք։ Յօհան. Ը. 24։

Նրա համար պէտքէ մեզ՝ որ էլ աւելի ականջ դնենք էն ասած բաներին, որ չըլինի թէ մին ժամանակ դատարկւոյած պակասվինք։ Պատճառն որ՝ եթէ էն բանն հաստատ էլաւ որ հրեշտակներին ձեռովն խօսվեցաւ, և ամէն յանցանք և անհնազանդութիւն ընդունեց իրան արդար

պատիժըն։ Ապա մենք ի՞նչպէս կը-
պըծնինք՝ թէ որ անհոգ ըլլինք.
Նոյնպէս փրկութեան համար, որ ա-
ռաջ քարոզվեցաւ Տէրէն և (ապա)
նորանց ձեռովըն՝ որ լսեցին՝ մեր
միջումն հաստատվեցաւ։ Եբր. Բ.
1—3։

(Թէ որ) մինն Մօսէսի օրէնքըն ա-
նարգումէր՝ առանց ողորմութեան
երկու կամ երեք վկայի խօսքով մեռ-
նումէր։ Ապա հիմիկ որքա՞ն աւելի
սաստիկ պատժոյ արժանի կըհամարիք
նորան՝ որ Աստուծոյ որդոյն ոտի
տակ կոխեց և նոր ուխտի արիւնըն
պիղծ համարեց՝ որ նա սրբվեցաւ
նորանով. և շնորհաց հոգոյն նախա-
տինք տուաւ։ Եբրայ. Ժ. 28. 29։

---

Ժ.Գ. Թէ որ ասես՝ թէ արդա-
րացել ես Քրիստոսի արիւնովըն, հա-
ւատքի ձեռովըն, և թէ Աստուծոյ
որդի ես եղել սուրբ հոգուցն ծըն-

վերով, մի թէ մոռածեցի՞ր թէ քո էդ մեծ երանութիւնդ հաստատ վերկայութենով և նշանով պէտք է ճանաչվելի և թէ էդ հաստատ և Աստուածաշնչին համաձայն վկայութիւնդ և նշանդ՝ մենակ էն է որ սուրբ հոգին քո սրտի մէջն բնակվում և նորան լուսաւորում և սրբում. որ հոգովն մեռցնես մարմնոյ գործքերըն և քո ցանկութիւններըդ և հեշտութիւններըդ սպանես, և էս չար աշխարհքիցս էլ հրաժարվիս. Ու՞ր հոգոյ պտուղներըն որ քո սրտումդ են, մի թէ քո կեանքի և վարքի մէջըն էլ երևո՞ւմեն, որ ոչ թէ մենակ քո պարտականութիւններըն որ դէպի Աստուած ունիս կատարես, բայց էլ ամէն մարդկանց բարի անես, մանաւանդ նորանց՝ որ քո հաւատքի ընտանիք են.

---

Չէ՞ք գիտում՝ որ անիրաւներըն Աս-

տուծոյ արքայութիւնըն չե՛ն ժառան-
գել։ Եւ դուք էնպիսիներ էիք. բայց
(հիմիկ) 'լուացւեցաք՝ բայց սրբւեցաք՝
բայց արդարացաք մեր Տէր Յի-
սուսի Քրիստոսի անունովն և մեր
Աստուծոյ հոգովն։ Ա. Կորն. Զ.
9. 11։

Եւ ես նորանց վերայ իմ անձըս
սուրբ եմ անում՝ որ նորա՛նք էլ ճըշ-
մարտութենով սրբւած լինին։ Յօ-
հան. ԺԷ. 19։

Յիսուս իրան անձըն մեզ համար
տուաւ. որ մեզ ամէն անօրէնու-
թենից փրկէ. և սրբելով իրան հա-
մար յատուկ ժողովուրդ շինէ որ
ջերմեռանդութենով բարի գործքե-
րին հետևինք։ Տիտ. Բ. 14։

Աստուծոյ փրկութիւն տուօղ շը-
նորհքըն երևեցաւ ամէն մարդկանց
որ էլ խրատումէ մեզ՝ որ ուրանանք
ամբարշտութիւնըն և աշխարհական

ցանկութիւններըն (և) պարկեշտութենով և արդարութենով և Աստուածպաշտութենով ապրինք էս աշխարհքումս։ Տիտ. բ. 11. 12։

Բայց լինի որ մի՛ն ասէ. թէ դու հաւատք ունիս՝ և ես գործք ունիմ. (ապա) ցո՛յց տուր ինձ քո հաւատքըդ առանց գործքերի՝ և ես իմ հաւատքըս ցոյց կըտամ քեզ իմ՝ գործքերովս։ Յակօբ. բ. 28։

---

ՃԴ. Մի՛ թէ յիշու՞մես քո մըտքումդ՞ թէ թէև ամէն հոգևոր շնորհքներըն Աստուծոյ մեծ և պատուական խոստմունքներումն յայտնվեցան Քրիստոսով և քեզ համար պատրաստ են, բայց հենց էնպէս էլ պէտք է քեզ որ խնդրես նորանց՝ և ջանք էլ անես նորանց համար՝ ջերմեռանդ աղօթքով, մինչև որ ընդունիս նորանց՝ միշտ մտիկ տալով Յիսուսի վերայ,

որ նորա մահի զօրութենովն մեղաց հին մարդն ջնջվի, և նոր կենանքի մէջ մտն գայ:

---

Խնդրեցէք և կըտըրվի ձեզ, ման եկէք և կըգտնէք. (դուռն) թակեցէք և կըբացվի ձեզ: Մատթ. Է. 7:

Անդադար աղօ՛թք արէք: Ա. Թես. Ե. 17:

Աս գիտացէք՝ որ մեր հին մարդն նորա հետ խաչվեցաւ՝ որ մեղաց մարմինն խափանվի. որ մենք էլ չըծառայենք մեղքին: Բայց շնորհակալութիւն (լինի) Աստուծոյ՝ որ մեղքի ծառայ էիք (դուք.) և սրտով հնազանդվեցաք էն վարդապետութեն օրինակին՝ որ նորան յանձնվեցաք: Ապա ուրեմն մեղքից ազատված ծառայեցէք արդարութեանն: Հռօմ. Զ. 6. 17:

Ապա թէ որ դուք որ չար էք՝ գիտումէք բարի պարգեւներ տալ ձեր որդոցն. էլ որքան աւելի ձեր Հայրն երկնքիցն բարի բաներ կըտայ նորանց՝ որ ուզումեն նորանից: Ղուկ. ժա. 13:

---

ԺԱ. Մի՛ թէ ջանք ես անո՞ւմ որ Ա՟յ շնորհքըն գտնելոյ հնարքներըն գործ ածես. Մի՛ թէ սիրո՞ւմես և պատուո՞ւմես Տէրի օրըն, և սուրբ պահո՞ւմես նորան: Մի՛ թէ թող չե՞ս անում որ պղծվի նա ծուլութենով կամ ունայն ուրախութեան հետևելով և կամ աշխատանք անելով: Մանաւանդ՝ մի թէ համարո՞ւմես՝ թէ քեզ համար մեծ պարտաւորութիւն և յատուկ առանձին շնորհք է՝ որ էն ս՟բ օրըն գործ ածես քո հոգույ և յաւիտենական կեանքի համար, և նորանում մինակ Ա՟յ ծառայութեանն պարապիս:

Մ՝իտքդ բեր շաբաթ օրըն որ սուրբ պահես նորան։ Վեց օր գործէր և քո ամէն գործքերըդ արա։ Եօթներորդ օրումն քո Տէր Աստուծոյ շաբաթն է, մի՛ գործեր նորանում քո ամէն գործքերըդ՝ ոչ դու՝ (և) ոչ քո տղան՝ ոչ քո աղջիկն՝ ոչ քո ծառան՝ ոչ աղախինն (ղարավաշը.) ոչ քո եզն և էշն, ոչ քեզ մօտ եկածն՝ և ոչ էլ օտարականն որ քեզանում է. ինչու որ՝ Աստուած վեց օրում արաւ երկինքըն և երկիրըս և ծովըն և էն ամէն բաներըն որ նորանում է. և եօթներորդ օրումն հանգիստ առաւ՝ և նորան սըրբեց։ Ելից. Ի. 8—11։

Քրիստոսի խօսքն լիութենով բընակվի ձեր միջումն որ ամէն իմաստութենով իրար սովորցնէք և խրատէք սաղմոսներով և օրհնութիւներով և հոգևոր երգով՝ և շնորհքով Ա.յն օրհնէք ձեր սրտերումն։ Կող. Գ. 16։

Չը՚թողենք մեր իրար ժողովքըն՝ ինչպէս որ մին քանիսն սովոր են անել. բայց իրար յորդորենք։ Եբրայ. Ժ. 25։

---

Փ. Օ. Իսկի փորձով իմացել ես՝ թէ աստուծոյ ճանապարհներըն ուրախութեան ճանապարհներ են. և թէ ոչ մենակ պարտական ես սրբութեան և հնազանդութեան ճանապարհովն գնալ, որովհետև մեծ Աստուծոյ իշխանութենովն է հրամայված, բայց որ հենց նորա ծառայութիւնն կատարեալ ազատութիւն է։ Մ՝ի թէ փորձով գիտո՞ւմես՝ թէ երբ որ դու սրբութեան հետևիս. քո սիրտդ ուրախանումէ՝ թէ մխիթարութենովն և խաղաղութենովն որ հիմիկ վայելումէ և թէ էն փառաց յուսովն, որ ՚նոր գալու աշխարհքումն պիտի ժառանգես։

Սիրելիներ՝ հիմի՛կ Աստուծոյ որդիք ենք. և դեռ յայտնի չէ՝ թէ ինչ պիտի լինինք։ Գիտումենք թէ երբ որ նա կը յայտնուիլի, նորան նման կը լինինք. ինչու որ՝ կը տեսնենք նորան ինչպէս որ է։ Եւ ամէն ով որ էս յոյսը ունի իրանում, սրբումէ իրան անձըն՝ ինչպէս որ նա սուրբ է։ ա. Յօհան. Գ. 2. 3։

Եւ կասես էն օրումն՝ կօրհնեմ քեզ՝ որ բարկացար ինձ վերայ, և քո բարկութիւնըդ յետ դարձրիր ինձանից, և ինձ ողորմեցար։ Ահա իմ Աստուած իմ փրկիչ Տէրն է. և իմ յոյսը նորա վերայ կը դնեմ, և նորանով կը փրկվիմ; և չեմ վախենալ. ինչու որ՝ իմ փառքս և իմ օրհնութիւնս Տէրն (է), և ինձ փրկութիւն էլաւ (նա։) Եւ ուրախութեան ջուրըն փրկութեան աղբիւրիցն առէք։ Եսայ. ժԲ. 1—3։

Նորա ճանապարհներն բարութեան ճանապարհներ են. և նորա ամէն գնացքն խաղաղութենով: Առակ. Գ. 17:

Ուրեմն մենք որ հաւատքով արդարացած ենք, խաղաղութիւն ունենանք Աստուծոյ հետ մեր Տէր Յիսուսի Քրիստոսի ձեռովն: Որ նորանով էլ ընդունեցինք հաւատքով մանելն էս շնորհքիս մէջ որ նորանում կացած ենք. և Աստուծոյ փառաց յուսովն պարծենումենք: Ու չէ թէ մէնակ էսչափ՝ բայց մեր նեղութիւններին համար էլ պարծենումենք. ինչու որ՝ գիտումենք որ նեղութիւններն համբերութիւն են գործում: (և) համբերութիւնն՝ փորձութիւն և փորձութիւնն յոյս: Յոյսն էլի մին ժամանակ չէ ամաչացնում. պատճառն որ՝ Աստուծոյ սէրն թափված է մեր սրտերի մէջ սուրբ Հոգոյ ձեռովն՝

որ տըւկվաւ մեզ։ Հռովմայեցւոց. Ե. 1—5։

---

ԺԼ. Մ՞իթէ պատուումես և հաստատ մտքով ականջ ես դնում՝ աւետարանի քարոզութեանն։ Ինչի միտք դնելով քննումես սուրբ գրքերըն՝ միտք անելով թէ սորանք հաստատել են որ խմաստուն անեն քեզ փրկութեան համար՝ էն հաւատքովն որ Քրիստոս Յիսուսումն է։

---

Սուրբ հաւատքն լսելուցն է և լըսելն՝ Քրիստոսի խօսքիցն։ Հռով. Ժ. 17։

Որ տղայութենիցդ սուրբ գրքերըն գիտումես, որ նորանք կարող են քեզ իմաստուն անել փրկութեան համար էն հաւատքովն որ Քրիստոս Յիսուսումն է։ Բ. Տիմ. Գ. 15։

Ի՞նչպէս սիրեցի քո օրէնքըդ. ա-

մէն օր իմ խօսքս է։ Սաղմ. ՃԺԸ. 97։

Քննեցէք գրքերը՝ որ դուք կարծումէք թէ նորանցով ունիք յաւիտենական կեանքը։ Ու հէնց նորանք են որ ինձ համար վկայումեն։ Յօհան. Ե. 39։

Բաց արա իմ աչքերըս, որ մտիկ տամ քո օրէնքի հրաշքներին։ Սաղմ. ՃԺԸ. 18։

Սորանք (բերիացիքն) էլ աւելի ազնիւ անձինք էին քան թէ նորանք որ Թեսաղոնիկէ էին՝ որ (Աստուծոյ) խօսքը ամէն յօժարութենով ընդունեցին. միշտ գրքերը քննումէին՝ թէ էս (բանս) էսպէս է։ Գործ. ԺԷ. 11։

---

ԺԲ. Մի թէ հաստատ ժիր և հաւատամբքիմ ես քո անձըդ քննելոյ համար՝ որ չըլլինի թէ մէնակ դրսի

կերպարանքով Աստուածապաշտ երե-
ւիս և կեղծաւորութեան մէջ ընկնիլս
Յուսկի միտքդ ես բերո՞ւմ՝ էն որ գըր-
քերըն խօսումեն մի՛ս քանիսին համար.
որ կարծումէին թէ ճանաչումեն Աս-
տուծոյն. հայր կանչելով նորան, և ա-
սումեն՝ թէ վախումենք և սիրումենք
նորան, դեռ քանի որ մէնակ անուն
ունէին և դրսեանց Աստուածպաշ-
տութեան կերպարանք՝ առանց ճշմա-
րիտ հաւատարմութիւն ունելոյ, նորա
հետ Սուրբն Աստուծոյ փոխովն ես
մին գալիս. ջանք ես անում որ
Քրիստոսի խաչի զօրութենովն շի-
տակես քո չար վարքըդ՝ քո աշխար-
հական ցանկութիւններըդ, քո յիմար
մտածմունքներըդ՝ քո դատարկ և
պիղծ խօսքերըդ և էս՝ ամէն սրտով,
միշտ ամեն օր և ամէն ժամանակ ա-
նո՞ւմես երբ որ նորանք առաջ են գա-
լիս։ Օրթնացնո՞ւմես քո անձըդ
որ կատարես էս քո պարտաւորու-

Թլուննէրըդ. մի՛ թէ յետին գործքե-րըդ շա՛տ են առաջիններիցն.

---

Որդին փառաւորում է (իրան) հօ-րը՛՝ և ծառան վախում է իրան տէ-րիցն. ապա ուրեմն թէ հայր եմ, ո՞ւր է իմ փառքս. և թէ Տէր եմ, ո՞ւր է իմ պատիւս. ասում է Տէր ա-մենակարօղն. դո՛ւք քահանայքդ էք՝ որ իմ անունըս բամբասում էք, և ա-սում. թէ ի՞նչով բամբասեցինք քո անունըդ. Մաղաք. ա. 6.

Այս ժողովուրդս պռօշներովն է պատ-ւում ինձ, և իրանց սիրտն ինձանից հեռացած ջոկված է. Մատթ. ժե. 8:

Խոստանում են թէ Աստուծոյն գի-տեն և իրանց գործքերովն ուրանու-մեն նորան. որ պիղծ են և անհա-ւատ, և ամէն բարի գործքերի համար անպիտան: Տիտ. ա. 16.

Որ Աստուածպաշտութեան կերպա-

րանքըն ունին, և նորա զօրութենից ուրացած են. յետ քաշվիր նորանցից։ Բ. Տիմ. Գ. 5։

---

ՃԻԹ. Իմ մահկանացու ընկեր՝ մի թէ պէտք չէ՞ քեզ որ ամէն բանից աւելի յիշես և զարթնանաս էս մըտածմունքներովս՝ թէ խելի մէն բան կարող չէ օգնել կամ մխիթարել քեզ մեռնելոյ սահաթումն. բայց մէնակ Քրիստոսի փրկութիւն տուօղ գիտութիւնն, և Աստուածաշունչ գրքերով հաստատված յոյսն՝ որ տէր Յիսուս Քրի ձեռումն յաւիտենական կեանքի մէջ կընդունես։

---

Ով մահ՝ ո՞րտեղ է քո յաղթութիւնդ. դժոխք՝ ո՞րտեղ է ծակողդ։ Մահի ծակողն մեղքն է և մեղքի զօրութիւնն օրէնքն։ բայց շնորհակալութիւն լինի՛ Աստուծոյ՝ որ մեզ յաղ-

թութիւն տուաւ՝ մեր Տէր Յիսու-սի Քրիստոսի ձեռովն։ Ա. Կորնթ. ժե. 55։

Թէ և մահի շուաքներին մէջ մտնի գամ, չեմ վախենալ. ինչու որ դու ես Տէր՝ ինձ հետ ես։ Քո ցուպդ (մահակդ) և գաւազանդ՝ դորանք կը մխիթարեն ինձ։ Սաղմ. իգ. 4։

Երանի (է) էն մեռելներին որ հի-միկ շուտով Տէրումն ննջեցին (մե-ռան.) Հոգին էս է ասում. պատճառն որ՝ իրանց աշխատանքներիցն հան-գիստ առին. և իրանց գործքերըն գնացին իրանց ետևէն։ Յայտ. ժդ. 13։

---

Ի. Վերջապէս աղաչումեմ քեզ շատ ջերմեռանդութենով՝ որ միշտ մտածես և միտքդ բերես թէ մեծ դատաստան պիտի լինի արդարներին և մեղաւորներին վր, և թէ դու և ես և ամէն աշխարհքի մարդիք պէտք է

երևլինք են օրումն արդար դատաւորի առաջին, չէ թէ որ թամաշայ անենք, բայց որ դատվինք մեր գործքերին 'պէս. և ապա արդար դատաստան և վճիռ կընդունինք մեծ և սուրբ Ածանից:

---

Այլ որ ժամանակ որդին մարդոյ իրան փառքովն կըդայ և ամէն հրեշտակներն նորա հետ՝ էն ժամանակն իրան փառաց աթոռին վերայ կընստի: Այլ ամէն ազգերն կըժողովվին նորա առաջին, և նորանց կըջոկէ իրարից՝ ինչպէս մին հովիւ (չէօպան) որ ոչխարներըն այծերից կըջոկէ. Մատթ. իե. 31:

Մեր Տէր Յիսուս Քրիստոսն կը յայտնըվի երկնքիցն իրան զօրութեան հրեշտակներովն: Կրակի բոցով վրէժ առնելոյ նորանցից՝ որ Աստուծոյն չեն ճանաչում. և մեր Տր

Յիսուսի Քրիստոսի աւետարանին չեն հնազանդվիլում: Որ նորանք պատիժ կըքաշեն յաւիտենական կորուստըն Տէրի երեսիցն և նորա փառաւոր զօրութենիցն։ Բ. Թեսաղ. ա. 7—9։

Արա համար դուք էլ պատրաստ կացէք. ինչու որ՝ էն ժամին (սահաթին) որ դուք չէք օպասիլ՝ որդին մարդոյ կըգայ: Մատթէոս. իդ. 44.

Եւ նորանք (ամբարիշտները) կըգընան յաւիտենական տանջանքըն. և արդարները յաւիտենական կեանքըն: Մատ. իե. 46։

## Յորդորմունք։

Կարդացի՞ր էս հարցմունքները՝ մի թէ սուրբ գրքերից չե՞ն հա-

ւաքված. մի թէ անասելի օգտակար և հարկաւոր չե՞ն. մի թէ էնպէսի բաների համար չե՞ն խօսում՝ որ թէ էս ժամանակիս և թէ յաւիտենական երանութեանն վերայ են մտիկ տալիս. Մ՛ի թէ դու ոչ ինչ չըհամարեցի՞ր նորանց քո մարմնաւոր աշխատանքներին և զբաղմունքներին հետևելով և կէս էս աշխարհքիս հեշտ և փուճ ուրախութիւններին անմիտ ցանկանալով. Ա՜խ երանի թէ սրանից ետև իմաստուն լինիս որ իմանաս էս բաներըս. և սրտի ջերմեռանդութենով մտածես քո վերջըն և վախճանըն։ Քանի՞ մեծ ողորմութիւն է որ քո տգիտութենումդ և մեղքերումդ չըկորվեցար և դէն չըքցվեցար, և որ Աստուծոյ երեսիցն և նորա արքայութենիցն դուրս չըհանվեցար։ Մ՛իտք դիր և լսիր աւետարանի բարի աւետիքի ձայնըն. Աստուած դեռ համ-

բերում՝ որ՝ շնորհք և ողորմութիւն տայ քեզ։ Ողորմութեան դուռն դեռ բաց է՝ և դեռ հիմիկ տեղ կայ քեզ համար։ Յիսուս Քրիստոս եկաւ աշխարհքս, որ մեղաւորներըն փրկէ. հա՛ հենց մեղաւորների գլխաւորըն էլ։ Նորա արիւնն սրբում է ամէն մեղքերից։ Հիմի՛կ է ընդունելի ժամանակ, հիմի՛կ է փրկութեան օրն։ Ո՛վ ա՛ղքատ մեղաւոր ես շնորհք տուող փրկչի մօտն. ինչու որ՝ նա է տալիս արդարութիւն և խաղաղութիւն, և փառք. և նա խալխի մընին դուրս չի հանում, ով որ հաւատքով նորա մօտն է գալիս։ Տէրն տայ քեզ որ կամենաս և անես նորա բարի կամքըն. և ապա վերջն կըլինի խաղաղութիւն, և յաւիտենական կեանք։

Շուշի բերդումն աւետարանական ժողովքի տան մէջն էս հետեւօղ գըրեանքս էլ ծախվլումեն։

---

1. Նոր կտակարան տպեալ 'ի Զմիւռնիա։
2. Համառօտութիւն քերականութեան։
3. Համառօտ բառագիրք. 'ի գրաբառէ յաշխարհաբառ.
4. Ընթերցուածք 'ի հին կտակարանէ։
5. Հաւաքումն աստուածային վկայութեանց. գրաբառ և աշխարհաբառ։
6. Պատմութիւն սուրբ գրոց. գրաբառ։
7. Տետրակ այբուբենարան։
8. Առաջին կանոն ուղղութեան։
9. Երեք խօսակցութիւնք մի քահանայի մի աշխարհական մարդոյ հետ. աշխարհաբառ։
10. Աւետարանի զօրութիւն կամ մի արաբ ծառայի պատմութիւն. աշխարհաբառ։
11. Համառօտ քննութիւն քրիստոնէական հաւատոյ և մահմետական կրօնի. աշխարհաբառ։

